ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՀԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա փաստաբան Վահե Գրիգորյանի (արտոնագիր՝ թիվ 450) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

1. **<u>Հրապարակումների համառոտ բովանդակությունը.</u>**

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի և Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետի՝ զանգվածային լրատվության միջոցներով լայն տարածում ստացած հեռախոսային խոսակցության, այդ թվում՝ www.iravaban.net համացանցային կայքէջում 11.09.2018թ. «ԱԱԾ և ՀՔԾ պետի հեռախոսային խոսակցությունը, վարչապետի արձագանքը, մամլո ասուլիսը և ՀՀ 2-րդ նախագահի պատասխանը» [1] վերտառությամբ հրապարակված նյութում, մեջբերվել է ենթադրաբար Վահե Գրիգորյանին առնչվող հետևյալ խոսքերը՝

«Հեռախոսազրույցում ՀՔԾ պետ Սասուն Խաչատրյանը նշում էր նաև «Մարտի 1»-ի գործով փաստաբան Վահե Գրիգորյանի մասին:

*«**Սասուն Խաչատրյան** – Հիմա Վահեն ա գալու մոտս՝ Գրիգորյան, Վահեն լուրջ բան կգրի հեսա, ու ելույթ էլ կունենա ու սաղ հարցերին կպատասխանի: Պոռսպը իմ ելույթը ճիշտ չի էլի:*

***Արթուր Վանեցյան** – Չէ, չէ, չէ, թող Վահեն խոսա, որպես փաստաբան, որպես փորձագետ:*

***Սասուն Խաչատրյան** – Որպես փորձագետ, նաև ինքը Եվրադատարանում ա, չէ՞, ներկայացնում այս գործը»,- ասվում էր ձայնագրության մեջ:»*

ՀՀ ԱԱԾ ղեկավարի և ՀՀ ՀՔԾ պետի համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ, ՀՔԾ պետ Սասուն Խաչատրյանը հայտնել է[2]. «… *բացի այդ, եթե ավելի անկեղծ լինենք, ուրեմն հատուկ քննչական ծառայության ղեկավարը ի պաշտոնե, նախաքննություն իրականացնող անձ չէ: Նախաքննություն իրականացնող անձը քննիչն է, այդ քննչական խմբի ղեկավարը և քննչական խմբի քննիչները: Հատուկ քննչական ծառայության ղեկավարը ծառայության*

[1] Տե՛ս հետևյալ հղմամբ. http://iravaban.net/200856.html

[2] Տե՛ս հետևյալ հղմամբ. https://www.youtube.com/watch?v=aNgmBU89M5I , 1:47 րոպեից

ընդհանուր ղեկավարումն է իրականացնում, այսինքն հատուկ քննչական ծառայության ղեկավարը այդ քննությանը միջամտելու իրավական հնարավորություն էլ չունի:»:

2. <u>Փաստաբան Վահե Գրիգորյանի դիրքորոշումը.</u>

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.[3] հոդվածի 2-րդ մասի համաձայն, Պալատի նախագահի խորհրդականի կողմից փաստաբան Վահե Գրիգորյանին առաջարկվել է վերոհիշյալ հրապարակումներում իր կողմից կատարված արտահայտությունների վերաբերյալ ներկայացնել գրավոր բացատրություն: Փաստաբան Վահե Գրիգորյանը բացատրություն չի ներկայացրել:

Պալատի նախագահի խորհրդականի կողմից ներկայացվել է www.iravaban.net համացանցային կայքէջից 11.09.2018թ. *«Իհարկե, համագործակցել ենք ՀՔԾ-ի հետ, և ես անձամբ փաստաթղթեր եմ տրամադրել. Վահե Գրիգորյան»* վերնագրով մեկ այլ հրապարակում, որտեղ ամրագրված է եղել Վահե Գրիգորյանի դիրքորոշումը:

Այսպես, ըստ նշված նյութի՝ *«Իրավաբան.net-ը կապ հաստատեց Մարտի 1-ի գործով տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչ, փաստաբան Վահե Գրիգորյանի հետ, նա մեզ հետ զրույցում նշեց, որ դեռ չի լսել ձայնագրությունը, սակայն նաև չի հերքում՝ իր և ՀՔԾ-ի համագործակցությունը:*

Լրագրող *- Պարոն Գրիգորյան, Սասուն Խաչատրյանը նշում էր, որ պետք է հանդիպեք իրեն և կարող եք փաստարկներ ներկայացնել:*

Վահե Գրիգորյան *- Ես հաճախ եմ հանդիպել ՀՔԾ-ում այդ գործով, ժամանակ առ ժամանակ հիմա էլ եմ հանդիպում: Իրենց բազմաթիվ փաստաթղթերով տեքստեր եմ տվել:*

Լրագրող *- Մարտի 1-ի գործո՞վ:*

Վահե Գրիգորյան *- Այո, Մարտի 1-ի գործով: Ես տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչն եմ:*

Լրագրող *- Այսինքն, ամեն դեպքում Դուք չեք հերքում Ձեր և ՀՔԾ-ի համագործակցությունը:*

Վահե Գրիգորյան *- Ես ոչ միայն չեմ հերքում այդ փաստը, այլ մենք նաև պաշտոնապես ենք հայտարարել, որ տուժողների իրավահաջորդներն ուղիղ համագործակցելու են Հատուկ քննչական ծառայության հետ: Դրանում ոչ մի տարօրինակ բան չկա: Խնդիրն այն է, թե համագործակցության ո՞ր հատվածին է վերաբերում դա: Խոսքի մեջ ասվում է, որ պետք է Վահեն ելույթներ ունենա: Ես չգիտեմ, թե որտեղ է ելույթ ունեցել պարոն Խաչատրյանը, դա հեռուստատեսությունում է եղել, թե՝ չէ, եթե հեռուստատեսությունում է եղել, ապա նա չէր կարող իմանար, որ ես գալիս եմ ելույթ ունենալու, որովհետև ես լրագրողների հետ եմ խոսել: Սա առանձնապես էական բան էլ չէ: Ես, իհարկե, այդ մասին (Մարտի 1-ի) ելույթներ ունեցել եմ:*

Ի՞նչն է արտառոց այս ամեն ինչի մեջ: Ես ՀՔԾ-ի հետ, իհարկե, համագործակցում եմ, այստեղ ոչ մի կասկած չպետք է լինի: Մենք դա նաև պաշտոնապես ենք ասել: Մենք չենք համագործակցել այն նախաքննական մարմինների հետ, որոնք գործն ամբողջությամբ տանում էին տուժողների իրավահաջորդների իրավունքներին հակառակ, մասնավորապես, նրանց

հարազատներին մեղադրելով զանգվածային անկարգություններին մասնակից լինելու, դիմադրություն ցուցաբերելու և ոմանց նույնիսկ ոչ սթափ վիճակում դեպքի վայրում լինելու համար: Բայց վերջին 2-3 ամսվա ընթացքում մենք, իհարկե, համագործակցել ենք ՀՔԾ-ի հետ, և ես անձամբ փաստաթղթեր եմ տրամադրել:

Վերջին բողոքարկման ընթացքում, երբ խոսքը վերաբերվեց անձեռնմխելիությանը, ես ինքս, առանձին, վճռաբեկ բողոք եմ գրել, առանց դատախազության, առանց ՀՔԾ-ի հետ համագործակցելու, ինձ իրենց դիրքորոշումն այդ կապակցությամբ առանձնապես էլ չի հետաքրքրում:»:[3]

3. <u>Պալատի եզրահանգումը և որոշումը.</u>

Գտնում եմ, որ զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա փաստաբան Վահե Գրիգորյանի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցումը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **(այսուհետ, նաև՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Օրենքի 39.[1] հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 21-րդ կետի համաձայն՝ *մեղադրանքի կողմ հասկացության մեջ ներառում են՝ քրեական հետապնդման մարմինները, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը և նրանց օրինական ներկայացուցիչներն ու ներկայացուցիչները:*

Հետևաբար, տուժողի (իրավահաջորդի) ներկայացուցչի դատավարական շփումները (այդ թվում՝ դատավարական համագործակցությունը) դատավարության սուբյեկտ հանդիսացող նախաքննության մարմնի հետ, իրավաչափ են:

Պաշտոնատար անձանց կողմից Վահե Գրիգորյանին, որպես փաստաբան և փորձագետ դիտարկելու և նրան որոշակի վարքագիծ դրսևորելու հանձնարարության նմանվող խոսակցությունն ինքնին չի կարող Վահե Գրիգորյանի կողմից այդպիսի կախյալ կարգավիճակում հանդես գալու իրական փաստի մասին վկայել՝ նույնիսկ այն պարագայում, երբ Վահե Գրիգորյանն այդ խոսակցությամբ ակնկալվող վարքագիծը կդրսևորեր:

Փաստաբան Վահե Գրիգորյանի ակտիվ վարքագիծը, այդ թվում՝ հրապարակային ելույթները, կարող են բնորոշվել, որպես «Մարտի 1-ի» հայտնի գործով տուժողի (իրավահաջորդի) շահերի պաշտպանությանն ուղղված

---

[3] http://iravaban.net/200823.html

գործողություններ:

Ինչ վերաբերում է ՀՔԾ ղեկավարի այն խոսքին, որ *«…հատուկ քննչական ծառայության ղեկավարը ի պաշտոնե, նախաքննություն իրականացնող անձ չէ: Նախաքննություն իրականացնող անձը քննիչն է, այդ քննչական խմբի ղեկավարը և քննչական խմբի քննիչները: Հատուկ քննչական ծառայության ղեկավարը ծառայության ընդհանուր ղեկավարումն է իրականացնում, այսինքն հատուկ քննչական ծառայության ղեկավարը այդ քննությանը միջամտելու իրավական հնարավորություն էլ չունի:»*, ապա դա չի կարող այնպես մեկնաբանվել, որ տուժողի ներկայացուցիչ փաստաբան Վահե Գրիգորյանի համագործակցությունը նույն մեղադրանքի կողմում գտնվող նախաքննության մարմնի հետ չի եղել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 26-րդ կետի համաձայն դատավարության սուբյեկտ համարվող «**քննչական բաժնի պետ» հասկացության մեջ մտնում է նաև հատուկ քննչական ծառայության պետը**:

Նույն օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *քննչական բաժնի պետը՝*

1) նախաքննության կատարումը հանձնարարում է իրեն ենթակա քննիչին, գործը իրեն ենթակա մի քննիչից հանձնում է մյուսին.

2) հետևում է իրեն անմիջականորեն ենթակա քննիչների կողմից իրենց վարույթում գտնվող քրեական գործերով քննչական գործողությունները ժամանակին կատարելու, նախաքննության և կալանքի տակ պահելու ժամկետները պահպանելու, դատախազի ցուցումները և այլ քննիչների հանձնարարությունները կատարելու նկատմամբ.

3) իրեն անմիջականորեն ենթակա քննիչներին ցուցումներ է տալիս իրենց վարույթում գտնվող քրեական գործերով առանձին քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ.

4) նախաքննության կատարումը հանձնարարում է իրեն ենթակա մի քանի քննիչի:

Նշված նորմերից հետևում է, որ ՀՔԾ ղեկավարը նույնպես հանդիսանում է քրեական դատավարության սուբյեկտ և օժտված է նախաքննության նկատմամբ դատավարական ազդեցության լայն հնարավորություններով:

Հատկանշական է նաև, որ որևէ փաստացի տվյալ առկա չէ, որ փաստաբան Վահե Գրիգորյանն իր վերոհիշյալ համագործակցությամբ գործել է իր վստահորդների շահերին հակառակ:

Ամփոփելով վերոգրյալը, ՀՀ փաստաբանների պալատն արձանագրում է, որ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա փաստաբան Վահե Գրիգորյանի նկատմամբ կարգապահական վարույթ չի կարող հարուցվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բացակայում է կարգապահական վարույթ հարուցելու հիմքը (փաստաբանի այն արարքը, որում առերևույթ առկա կլինի Օրենքի կամ Կանոնագրքի խախտում):

Հաշվի առնելով, որ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկվել է զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների առիթով,

ինչի մասին Պալատի կայքում տեղեկություն է ներկայացվել, գտնում եմ, որ սույն որոշումը նույնպես պետք է հրապարակել Պալատի կայքէջում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.4-րդ հոդվածի, ինչպես նաև Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 12-րդ հոդվածի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա փաստաբան Վահե Գրիգորյանի (արտոնագիր՝ թիվ 450) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժել՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքի բացակայության պատճառով:

2. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝

- ***սույն որոշման օրինակն ուղարկել փաստաբան Վահե Գրիգորյանին,***
- ***ապահովել սույն որոշման հրապարակումը ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում:***

<u>Ծանոթություն:</u> *Կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին որոշումը շահագրգիռ անձը կարող է բողոքարկել դատական կարգով որոշումն ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:*

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

05 հոկտեմբերի 2018թ.
թիվ 361-Ա
ք.Երևան